ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, Ռազմավարական կառավարում. Մեթոդաբանություն և արդի հիմնահարցեր, *Երևան, «Տնտեսագետ», հրատ., 150 էջ։*

Տնտեսության ռազմավարական կառավարման մեթոդաբանության հիմնահարցերի գիտական մեկնաբանման և մեր հանրապետությունում շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում անհետաձգելի լուծումներ պահանջող գործնական խնդիրներին նվիրված ուշագրավ հետազոտությունների իրականացումն ու հրատարակումը ողջունելի են և, անկասկած, կնպաստեն հնարավոր կարճ ժամկետում ազգային տնտեսության ձևավորմանն ու ամրապնդմանը։ Հենց այդպիսի հետազոտությունների շարքում կարելի է դասել Յու. Սուվարյանի քննվող մենագրությունը։

Զեռնամուխ լինելով համանման ուսումնասիրությանը, Յու. Սուվարյանը բնավ էլ չի հավակնել քննել և սպառիչ պատասխան տալ ռազմավարական կառավարման բազմաբնույթ, բարդ, դինամիկ գործընթացի բոլոր հիմնահարցերին. դրանցից առանձնացվել և դիտարկվել են շուկայական տնտեսության անցումային փուլին առավել բնորոշները և վճռորոշները։ Դրանցով էլ պայմանավորված է գրախոսվող աշխատության կառուցվածքը։ Դիտարկվող հիմնախնդիրների մի ամբողջություն է կազմում մենագրության առաջին բաժինը՝ Ռազմավարական կառավարման մեթոդաբանությունը, երկրորդ բաժինը ամբողջությամբ նվիրված է սոսկ շուկայական հարաբերություններին անցման փուլի տնտեսական ռազմավարությանը վերաբերող հիմնահարցերի քննությանը։

Ընդգծելով տնտեսության կառավարման անհրաժեշտությունը, բացահայտելով դրա էությունը, բովանդակությունը, սկզբունքներն ու գործառույթները (պլանավորում, կազմակերպում, մոտիվացիա, վերահսկողություն), հեղինակը որպես հետագա քննության օբյեկտ առանձնացնում է ռազմավարական կառավարումը։ Այն դիտվում է որպես կառավարման հիմնական գործառույթ՝ պլանավորման կարևորագույն բաղկացուցիչ։ Պլանավորման հիմնական խնդիրը տնտեսության, կազմակերպությունների զարգացման նպատակի և խնդիրների հստակեցման, գործունեության նպատակամետ ուղղությունների ու իրացման մեթոդների նախանշումն է, ելնելով տնտեսության նվաճված մակարդակի համակողմանի վերլուծությունից և հետագա զարգացման բազմագործոն սոցիալ-տնտեսական փոփոխական երևույթների հեռանկարային կանխատեսումներից։ Արդյունքում, ի հայտ են գալիս սոցիալ-տնտեսական զարգացման բազում տարբերակներ և հարկ է լինում կատարել ընտրություն։ Հետևաբար, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, «կանխատեսման և պլանավորման միջև օբյեկտիվորեն առաջանում է ռազմավարության անհրաժեշտությունը, որի խնդիրն է որոշել կազմակերպության զարգացման հիմնական նպատակները, գլխավոր գերակայությունները, դրանց հասնելու համար ռեսուրսների ծավալը և բաշխման ուղղությունները» (էջ 19), այսինքն՝ կոնկրետացնել պլանի բովանդակությունը և ուղղվածությունը։ Այսպիսի մոտեցման դեպքում, տնտեսական ռազմավարությունը դիտվում է որպես տնտեսության, կազմակերպության երկարաժամկետ նպատակների, գերակայությունների ու գործողությունների, ինչպես նաև դրանց իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման գլխավոր ծրագիր, իսկ ռազմավարական կառավարումը՝ նպատակահարմար գործունեության համար որոշումների ընդունման գործընթաց, որոնք ուղղված են տնտեսական ռազմավարության ընտրությանը և դրա կենսագործման ապահովմանը։

Հիմնավոր տնտեսական ռազմավարության մշակման, այդ թվում ռազմավարական կառավարման, ելակետը նպատակի հստակեցումն է, որը կանխորոշում է տնտեսության, կազմակերպությունների զարգացումը բնութագրող ցուցանիշների փոփոխության ուղղությունները, կառավարման կազմակերպական համակարգը։ Մենագրությունում բերված է տնտեսագիտական գրականությունից հայտնի նպատակների դասակարգումը՝ ըստ բովանդակային, ժամանակային, աստիճանակարգային և կառավարման մակարդակների հատկանիշների։ Բացահայտվում է հիմնական նպատակի վերջնական որոշման և հիմնավորման, ռազմավարության ընտրության և իրացման գործընթացում տնտեսության, կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերի իրավիճակային վերլուծության և գնահատման վճռորոշ գերը։ Առանձնակի ուշադրություն է դարձվում ռազմավարության աշխատանքային տարբերակներից հիմնական նպատակին առա-

վելագույնը համապատասխանող տարբերակի ընտրության, դրան համապատասխան՝ կառավարվող համակարգի կազմակերպական կառուցվածքի, ընտրված ռազմավարության գնահատման հարցերին։

Ուշագրավ է պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության իրականացման գործում հեղինակի մոտեցումը ռազմավարական կառավարմանը։ Ինչպես իրավացիորեն նշում է նա, տնտեսական քաղաքականության խնդիրը տնտեսական կյանքի խիստ կանոնակարգումը չէ։ Այն դիտվում է որպես միջոցառումների մի այնպիսի համալիր, որը պետությունը մշակում և իրականացնում է տնտեսության զարգացումն անհրաժեշտ ուղղություններով ապահովելու, ռազմավարական խնդիրներին և սոցիալական հիմնահարցերի լուծման շահերին համապատասխանեցնելու, բազմահազար սուբյեկտների գործունեությանը որոշակի ուղղություն տալու համար։ Ընդգծվում է, որ տնտեսական լծակների համակարգի միջոցով պետությունն ընտրված ռազմավարական կառավարմանը համապատասխան, հավատարիմ իր կոչմանը, պարտավոր է հոգալ իր երկրի բնակչության ապրելակերպի, նրա զբաղվածության ապահովման, առողջապահության, կրթության, մշակույթի մասին, ամրապնդել պաշտպանունակությունը, կազմակերպել դրամաշրջանառությունը, բանկային և ֆինանսական գործունեությունը, երաշխավորել ձեռնարկության ազատությունը, ուղղություն տալ տնտեսական ու սոցիալական զարգացմանը։

Ինչպես տնտեսական քաղաքականության, այնպես էլ դրան համապատասխանող տնտեսական բարեփոխումների ռազմավարության գնահատականը, վերջիվերջո, օբյեկտիվ իրողություն է։ ԵՄԵ անցումը շուկայական տնտեսության համակարգին այլընտրանք չունի, սակայն դրա իրականացման ուղիները կարող են լինել տարբեր՝ պայմանավորված երկրի սոցիալ-քաղաքական, տնտեսական իրավիճակով, հասարակության բարոյահոգեբանական պայմաններով։ Տարբերում են ազատ շուկայական հարաբերությունների անցման աստիճանական և արագ («ցնցակաթվածային բուժման») ռազմավարություն։ Մեր հանրապետությունում ընտրվեց արագ բարեփոխումների ռազմավարությունը։ Տվյալ երկրի առանձնահատկությունները հաշվի առնող գիտականորեն հիմնավորված ռազմավարության դեպքում տնտեսական իրավիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները դրսևորելու էին դրական ուղղվածություն։ Սակայն, ինչպես ցույց է տրվում մենագրությունում, շուկայական հարաբերությունների արագ արմատավորման և համապատասխան կառուցվածքների ձևավորման հենց սկզբնական փուլում (1990—1991 թթ.) դրսևորվեցին հանրապետության տնտեսության քայքայման, սրընթաց գնաճի, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման միտումներ, որոնք հետագայում (1992—1994 թթ.) հանգեցրին խոր տնտեսական ճգնաժամի։ Պետք է ընդունել, որ դրանք ռազմավարական բնույթի պատճառներից բացի պայմանավորված էին նաև այնպիսի այլ գործոններով, ինչպիսիք էին փաստական պատերազմական իրավիճակը, տրանսպորտաէներգետիկ շրջափակումը, աղետի գոտու առկայությունը, ԽՍՀՄ փլուզման հետևանքով տնտեսական ավանդական կապերի խզումը և այլն։ Սակայն, ինչպես ընդգծվում է մենագրությունում, դրանք չէին վճռորոշները և այդ ամենը անհրաժեշտ էր հաշվի առնել արագ բարեփոխումների ռազմավարությունն ընտրելիս։ Դրանց հաշվառման դեպքում թերևս հնարավոր էր հրաժարվել «ցնցակաթվածային բուժման» ընտրված և իրականացվող տնտեսական ռազմավարությունից։ Ստեղծված իրադրության հաղթահարման, տնտեսության կայունացման և այնուհետև վերելքի ապահովման հիմնական ուղին Հայաստանի յուրահատուկ, ճկուն, հաշվեկշռված հիմնավոր տնտեսական ռազմավարության մշակումը և հետևողական կենսագործումն է։ Այն ներառելու է նաև ՀՀ և ԼՂՀ տնտեսական միասնացումը։ Վերջինիս համար կարևոր են ազգային միասնական գաղափարախոսությունը, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրների ընդհանրությունը, բնական ռեսուրսների համատեղ, համալիր, արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գրախոսվող մենագրությունը այժմեական և հետաքրքիր հետազոտություն է։ Այն ճանաչողական, գիտական նշանակության հետ մեկտեղ ունի գործնական ուղղվածություն և կարող է օգտակար լինել ինչպես հանրապետության տնտեսական քաղաքականությունը մշակող մասնագետների, այնպես էլ կառավարման ոլորտում աշխատողների, տնտեսագիտական բուհերի դասախոսների և ուսանողների համար։

Բ. Ս. ՄՍԼՎԻՆԱՋՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր